Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/4-Տ ծածկագրով գնանշման հարցման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի
բացման և գնահատման նիստի

ք. Երևան

02 հունիսի 2026թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Նազարյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Պողոսյանը, Ա. Սերգոյանը, Ս. Ասրյանը և Ռ. Գաբրիելյանը:
Քարտուղար՝ Կ. Քոչարյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի 2026թ. կարիքների համար՝ **«Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի կառուցում» ՀՀ Սյունիքի մարզի Բռնակոթ բնակավայրի խմելու ջրագծի կառուցման և վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/4-Տ** ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2026 թվականի մայիսի 08-ին, ժամը 16:00-ին /հրապարակվել է 2026 թվականի ապրիլի 23-ին:

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/4-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակիցը (ները)

Մասնակցի անվանումը		հասցե, հեռ., էլ. հասցե
1	<<ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ>> ՍՊԸ	ք. ԵՐԵՎԱՆ, Խորենացի 2-րդ փակ 17բն. հեռ.094-10-20-58 էլ. փոստ texqontrol@mail.ru
2	<<ԱՍ ՔՈՆԹՐՈԼ>> ՍՊԸ	ք. Երևան կենտրոն Մ. Մաշտոցի պող. շ.60 գրասենյակ 6 հեռ. 093-74-11-88 էլ. փոստ ascontrol.llc@gmail.com
3	<<ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ>> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ ք. Սիսիան, Գայի 13/30 հեռ. 093-39-30-80 էլ. փոստ samartshin@mail.ru

***ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/4-Տ* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

- Մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Տեղեկություններ մասնակիցների կողմից առաջարկված գների վերաբերյալ

ՀՀ դրամ

	Մասնակիցների անվանումը	**նախահաշվային արժեք (ԱԱՀ-ն ներառյալ) 2 280 380 առկա 1 900 000**		
		Առանց ԱԱՀ	**ԱԱՀ**	**Ընդհանուր գին**

1	<<ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ>> ՍՊԸ	1 400 000	-	1 400 000
2	<<ԱՍ ՔՈՆԹՐՈԼ>> ՍՊԸ	1 800 000	-	1 800 000
3	<<ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ>> ՍՊԸ	2 200 000	-	2 200 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

Հանձնաժողովի ուսումնասիրությունը

27.05.2026թ.

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/4-Տ ծածկագրով ընթացակարգի շրջանակում ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը արձանագրվել է.

«ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

Դիմում հայտարարության Հավելված N 1- ում պատվիրատուի անունը սխալ է նշված,

Հավելված N 1.3-ում ինժիներ շինարար մասնագետի առնվազն 5 տարվա ՋՋ ոլորտում մատուցված խորհրդատվական ծառայությունների փորձառությունը ապահովված չէ (համաձայն Հրավերի 2.4 կետի 4-րդ ենթակետի):

Մասնակից «ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

Հավելված N 1.3-ում ինժիներ շինարար մասնագետի առնվազն 5 տարվա ՋՋ ոլորտում մատուցված խորհրդատվական ծառայությունների փորձառությունը և գործունեության ոլորտը ապահովված չէր (Հրավերի 2.4 կետի 4-րդ ենթակետի),

Ներկայացված մասնագետի անձնագրի ժամկետը վավերական չէ:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/4-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով հրավերի 8.9 կետը, 27.05.2026թ. հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել՝

«ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ» ՍՊԸ–ին և «ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 29.05.2026թ. ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ծանոթություն

Սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/4-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները

Սահմանված ժամկետում ընկերությունները ներկայացրել են փաստաթղթեր, որի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը պարզեց, որ արձանագրված անհամապատասխանությունները ամբողջությամբ շտկված չեն:

«ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ» ՍՊԸ-ի և «ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերում Հավելված N 1.3-ում ինժիներ շինարար մասնագետի առնվազն 5 տարվա ՋՋ ոլորտում մատուցված խորհրդատվական ծառայությունների փորձառությունը ապահովված չէ:

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/4-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով՝ **ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/4-Տ** ծածկագրով հրավերի 8-րդ բաժնի 8.10 կետը (Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:) «ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ» և «ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը մերժել:

2. ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/4-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել <<ԱՍ ՔՈՆԹՐՈԼ>> ՍՊԸ -ին:

3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Ա. Նազարյան

անդամներ _____ Ա. Պողոսյան

_____ Ա. Սերգոյան

_____ Ս. Ասրյան

_____ Ռ. Գաբրիելյան

Քարտուղար _____ Կ. Քոչարյան